ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼ

ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА ОБОРОНЫ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
DEPUTY MINISTER OF DEFENCE
OF THE REPUBLIC OF ARMENIA

«11» 12 2024 թ.
№ ԴՄՆՊ-ԳԿԴ-1819

«ՀԱՅՆԵԹ» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ 00157919)
տնօրեն՝ Դ.Գրիգորյանին
հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Հ. Հակոբյան 3
հեռ.098-32-05-63
էլ. հասցե՝ arcach@yandex.ru

ՀՀ պաշտպանության նախարարության և «ՀԱՅՆԵԹ» ՍՊ ընկերության միջև 07.08.2021թ. կնքված N ՄԱԱՊՁԲ-22-1-1 գնման պայմանագրի (փոփոխություն №1 առ 08.02.2023թ.) (այսուհետև՝ Պայմանագիր) շրջանակներում Ձեր ընկերությունը 2022-2024թթ.. ընթացքում պետք է մատակարարեր 150 հատ ապրանք, որից 43 հատը՝ 2022թ., 50 հատը՝ 2023թ., իսկ 57 հատը՝ 2024թ.: Սակայն «ՀԱՅՆԵԹ» ՍՊԸ-ն ընդհանուր առմամբ մատակարարել է 93 հատ ապրանք, իսկ 2024թ. համար նախատեսված 57 հատը չի մատակարարել, որից 27 հատը պետք է մատակարարեր 2024թ. 2-րդ եռամսյակում, իսկ 30 հատը՝ 2024թ 3-րդ եռամսյակում: Ինչպես նաև Ձեր ընկերությունը 30.10.2024թ. ելք ՀՆ-01 գրությամբ հայտնել է, որ մատակարարում չի իրականացնելու:

Ոչստի հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետը՝ (ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի)՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2024թ. դեկտեմբերի 11-ին միակողմանի մասնակի լուծել է Պայմանագիրը:

Տեղեկացնում եմ, որ «ՀԱՅՆԵԹ» ՍՊ ընկերությունը պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005028106 հաշվեհամարին փոխանցել 4 167 217 ՀՀ դրամ՝ որպես տույժ Պայմանագրի 6.2 կետի համաձայն, որը հաշվարկված է մինչև 30.10.2024թ. ներառյալ:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ «ՀԱՅՆԵԹ» ՍՊԸ-ի կողմից տույժը սահմանված ժամկետում չվճարելու դեպքում ՀՀ պաշտպանության նախարարության կողմից միջոցներ կձեռնարկվեն «ՀԱՅՆԵԹ» ՍՊԸ-ի կողմից վճարման ենթակա տույժը գանձելու ուղղությամբ:

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ

0044, ԵՐԵՎԱՆ, ԲԱԳՐԵՎԱՆԴԻ 5, ՀԵՌ.՝ (+374 10) 29 45 45, ԷԼ.ՓՈՍՏ՝ karen.brutyan@mil.am
ЕРЕВАН, БАГРЕВАНДА 5, 0044, ТЕЛ: (+374 10) 29 45 45, ЭЛ.ПОЧТА: karen.brutyan@mil.am
0044, 5 BAGREVAND STR., YEREVAN, TEL: (+374 10) 29 45 45, E-MAIL: karen.brutyan@mil.am